ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ  № 8, 1958  Общественные науки

Ս. Բարխուդարյան

# ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՐԸ ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԵՐՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանը պատմական հուշարձանների առատությամբ, եթե ոչ բացարձակ, ապա իր տարածության համեմատությամբ, հավանաբար առաջին տեղը կգրավի աշխարհում։ Այնքան շատ են այդ հուշարձանները և սփռված ամեն քայլափոխում, որ տասնյակ տարիներով և պետական առատ միջոցներով գործող հատուկ գիտական հիմնարկների մշտական գիտարշավները դեռևս չեն կարողացել ավարտել Սովետական Հայաստանի սահմաններում գտնվող այդ կոթողների ցուցակագրությունը։

Հայաստանի յուրաքանչյուր գյուղը իսկապես մի թանգարան է, նրա հանդերի քարքարոտ բլուրները գրեթե միշտ պսակված են հնադարյան կամ միջնադարյան բերդերով, ամրոցներով, բլուրների լանջերին, հարթությունների վրա սփռված են բնակավայրի ավերակները, դրանց հաջորդում են գամբանադաշտերը. գյուղամիջում բարձրանում են մեկ կամ ավելի հին եկեղեցիներ, ճարտարապետական կոթողներ, V, VII, IX, X—XIII և առնվազն XVII դարերում կառուցված, հաճախ V-ից մինչև XVII-ի մնացորդներն իրար կողքի ու միախառնված, դրանց շրջապատող ընդարձակ բակերում պատվանդանների վրա պահպանված են քանդակագործական արվեստի հիանալի կոթողներ— խաչքարեր։ Գյուղին կից, առապարների վրա գերեզմանատունն է, որտեղ ես հիանալի զարդերով խաչքարերն ու կենցաղային քանդակվածքներով ծածկված տապանաքարերը իրենց արվեստի ուժով ծառանում են ձեզ մի րոպե համակող մահվան թախծի դեմ։

Գյուղը շրջապատող բլրակների գագաթները պսակված են մենավոր խաչքարերով, որոնց հետ կապված են ամենագեղեցիկ ավանդությունները. մի տեղ դրանք կանգնած են դժբախտ սիրահարների շիրիմի վրա, մի ուրիշ տեղ ժողովրդի համար իր կյանքը զոհած հերոսն է ննջում։ Ճամփաների խաչմերուկներում, աղբյուրների գլխին, ջրանցքների կողքերին, կամուրջների գլխին կանգնած են խաչքար—հիշատակարաններ այդ շինարարությունները կատարողների հիշատակն ու ժամանակը հավերժացնող հիշատակագրություններով։

Ժողովրդի մեծ մասը այնքան է վարժվել դրանց ներկայությանը, որ, դժբախտաբար, հաճախ չի էլ նկատում. դա հասկանալի հոգեբանություն է, մարդկանց մեծ մասը իր հայրենի քաղաքի տեսարժան վայրերը տասնյակ տարիների ընթացքում չի տեսնում, բայց օտար քաղաք ընկնելիս անհագորեն որոնում է տեսարժան վայրեր ու թանգարաններ։ Երևանի դիմաց բարձրանում է բնության հրաշալիքներից մեկը՝ Արարատը, որը բուսած հարթությունից, խոյանում է վեր և իր հավիտենական ճերմակ գագաթով ճեղքում երկնքի լազուրը։ Նա մեր բոլորի հայացքի առջև է, միայն պետք է գլուխը վեր բարձրացնել հիանալու համար այդ գերագույն գեղեցկությամբ, բայց Երևանի մի քանի հարյուր հազար բնակչից քանի՞ տասնյակն է արդյոք օրվա մեջ գլխի այդ թեթև շարժումը կատարում։

Սակայն օտար այցելուները և անսովոր աչքերն անմիջապես նկատում են մեր երկրի պատմական հուշարձանների առատությունն ու ճոխությունը և զարմանում։

Բայց մեզ համար օտար ճամփորդների ու գիտնականների կարծիքից ավելի կարևոր է վերլուծել այդ երևույթի արմատներն ու պատճառները։

Մեր կարծիքով երեք հիմնական գործոններ են դեր կատարել այդ բազմահազար պատմական հուշարձանները կերտելու և պահպանելու գործում։

1. Պատմական Հայաստանի բնակեցված լինելը ամենավաղ դարաշրջաններից.
2. Մեր պատմական հուշարձանների շինանյութի հիմնականում քարից լինելը և
3. Հուշարձաններ կերտելու սովորության ժողովրդական-մասսայական բնույթը։

Փորձենք այդ երեք հիմնական գործոնների նշանակությունները պարզել մանրամասնորեն։

Երկրաբանությունը և հնագիտությունը հաստատել են, որ Հայաստանում մարդն սկսել է ապրել հենց այն դարաշրջանից, երբ նա գոյություն է ունեցել երկրագնդի վրա. երկրաբանորեն

դա զուգադիպում է չորրորդական դարաշրջանին և հնագիտական տեսակետից՝ պալեոլիթին։ Սա ապացույց է արդեն, որ մի քանի հարյուր հազար տարի Հայաստանի հողի վրա ապրել և աշխատել են մարդկային հասարակություններ։ Նույն դիտություններն ապացուցել են նաև, որ մարդկային հասարակությունների կյանքը առանց ընդհատումների է ապրել և զարգացել մեր երկրի վրա, թողնելով գետնի երեսին կամ նրա տակ իր ստեղծագործած կուլտուրայի նյութական հետքերն ու մնացորդները, այդ բոլոր երկարատև պատմական կյանքին վերաբերող ապացույցներ հավաքվել և կենտրոնացվել են մեր թանգարաններում։

Թե որքան հարատև և խիտ կերպով է բնակեցված եղել Հայաստանը անհիշատակ ժամանակներից, օրինակ կարող է ծառայել Թեկուզ մեր մայրաքաղաքը։ Երևանի այժմյան սահմանների վրա հայտնաբերված բազմաթիվ հին, պատահականորեն բացված դամբարաններից բացի կան հինգ քաղաքատեղիներ ու գյուղատեղեր, դրանցից հնագույնը Հենգավիթն է, քաղաքի 3-րդ մասում, Զանգվի ափին, որի հնությունը հասնում է մինչև 3-րդ հազարամյակը, մեր թվականությունից առաջ. ապա կայարանի դիմացի Մոխրաննաթ թափայի վրա եղած շենատեղը, որը վերաբերում է 2-րդ հազարամյակի կեսերին մեր թվ. առաջ. երրորդը՝ Միծեռնակաբերդի բերդշենն է, որը հավանաբար վերաբերում է 1-ին հազարամյակի սկզբներին, այնուհետև Արին-բերդի բերդն ու շենն է Թոխմախան գյուղի մոտ, որը շինված է VIII դարում և ապա հանրահայտ Կարմիր-բլուրը՝ շինված VII դարում նույնպես մեր թվականությունից առաջ։

Պատմական այդ երկարատև գոյություններ, իհարկե, մեր երկրում պատմական հուշարձանների առատության և շատության առաջին և հիմնական նախադրյալն է, սակայն այդ գործոնը իր նշանակության մեծ մասը կկորցներ, եթե չլիներ երկրորդը, այսինքն, եթե այդ հասարակություններից մնացած նյութական կուլտուրայի մնացորդները լինեին այնպիսի նյութերից, որոնք ժամանակի ընթացքում ենթակա լինեին փթելու և բայքայվելու և իրոք՝ ուրիշ երկրներում, որտեղ մարդը նույնպես ապրում է իր սկզբնավորման օրից շատ քիչ թվով նյութական հուշարձաններ են պահպանվել և այդ հիմնականում այն պատճառով, որ նրանց մեծ մասը, որոշ դարաշրջաններում, շինվել են այնպիսի բայքայվող նյութերից, որոնք համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում բայքայվել են, ավերվել։

Այսպես օրինակ, հնագույն այն ժամանակներում երբ մարդն իր գործիքները շինում էր փայտից, քարից ու ոսկորից, երկրագնդի շատ վայրերում հայտնաբերվել են բազմաթիվ քարե և ոսկրե գործիքներ, իսկ փայտե գրեթե չկան, քանի որ վերջիններս փթել են և չեն հասել մեզ։

Այն շրջանում, երբ մարդու տեխնիկական հմտությունը այնքան է կատարելագործվում, որ հնարավորություն է տալիս մարդուն դուրս գալու բնական այրերից և կառուցելու արհեստական բնակարաններ, նա բնականաբար լիմում է իր շրջապատում եղած շինարարական նյութերին, այն երկրներում, ուր այդպիսի բնակարանների շինանյութը եղել է փայտը, եղեգը և նման նյութեր, դրանք բոլորը ժամանակի ընթացքում փթել, ոչնչացել են և իզուր է նրանց հնագույն հետքերը որոնել։ Բայց այն վայրերում, ուր բնական միջավայրը եղել է քարքարոտ, մարդը բնականաբար դիմել է այդ կայուն նյութին, նրանից է կառուցել բնակարաններ, դրանց հետքերը մնացել են մինչև մեր օրերը։ Հայաստանը պատկանում է հենց այս վերջին բնական միջավայրին. ամենուր Հայաստանում շինանյութի առատ ու հիմնական տեսակը հանդիսացել է քարը և այստեղ արդեն մարդկային վաղագույն բնակարաններն քարից են շինված, դրանց մնացորդները պահպանվել են։

Նախնադարյան համայնական հասարակության դարաշրջանում, բրոնզե դարից սկսած, Հայաստանի արդեն նստակյաց ցեղերն ու տոհմերը իրենց գյուղերն ու շենները շինում էին բլուրների թեք լանջերին, դագաթին իրենց բերդը, որի շրջապարիսպները կառուցվում էին ահռելի մեծության անտաշ քարաբեկորներից։ Ցեղերի ու տոհմերի միջև տեղի ունեցող անվերջ ընդհարումների ժամանակ կիկլոպյան այդ բերդերը դառնում էին ամբողջ տոհմի թե՛ մարդկանց և թե՛ անասունների ապաստանը, փրկության միակ միջոցը։ Վիթխարի բարաբեկորներից շինված այդ շենների և բերդերի հարյուրավոր մնացորդներ ավերակ վիճակում պահպանվել են մինչև մեր օրերը. թե ինչքան խիտ են եղել այդ շեները իրենց բերդերով, կարելի է դաղափար կազմել ներկա Նոր Բայազետի շրջանի օրինակով։ Այս շրջանի գյուղերի թիվը ներկայումս 12 է, բայց VIII դարում մեր թվականությունից առաջ, ուրարտական թագավոր Սարդուրը դրավելով այդ շրջանը, արձանագրել է, որ այստեղ եղել է 22 բերդ, որոնք բոլորը նվաճել է մեկ օրում։ Հնագիտական հետազոտությունները հաստատում են, որ իրոք մինչև օրս էլ այդ 22 շենների և բերդերի ավերակները գոյություն ունեն Նոր Բայազետի շրջանում, որն այն ժա

մանակներում կոչվել է Վելիրուսի երկիր. բերդերից ոմանց պատնեշները կանգուն են մինչև 2 մետր բարձրությամբ, նրանց հաստությունը սովորաբար երկու-երեք մետրի չափ է, երկու երեսները շարված մեծամեծ բարաբեկորներից և արանքը լցված մանր քարերով[1]։

Հավանական է, որ պատնեշներից մնացած այդ քարե մասերի վրա եղել են ավելի բարձր պատեր անթուրձ աղյուսից, որոնք դարերի ընթացքում տեղերի և բամու հետևանքով մաշվել, անհետացել են։

Քարի օգտագործման շնորհիվ ոչ միայն բնակավայրերի մնացորդներն են մեզ հասել, այլև հնագույն մարդու գերեզմանները։ Նոտակյաց մարդու մոտ մեռելներին թաղելը սովորություն դարձավ, աստիճանաբար թաղման ձևերը դառնում են բազմազան, թե՛ գետնի տակ և թե՛ գետնի երեսի մասում և այնքան մեծ ու բարդ, որ միայն ամբողջ տոհմի միացյալ ուժերով հնարավոր էր այդ գործը կատարել. գետնի մեջ փորվում էր շատ մեծ փոս— գերեզման, նրա պատերը շարվում էին մեծամեծ քարաբեկորներով՝ ճիշտ իրենց տների նման, ծածկվում 3—4 մետր երկարություն ունեցող գերանանման հսկա քարերով, միայն թողնվում էր մի անցք՝ ննջեցյալներին ներս տանելու համար, մինչև որ ամբողջ գերեզմանը լցվում էր (երբեմն 10—30 ննջեցյալ և ավելի), ապա գերեզմանի վրա հող լցնելով բարձրացվում էր բլրակ, որի շուրջը շարվում էին մեծամեծ քարեր շրջանակի ձևով։

Պարզ է, որ այդպիսի ծանր աշխատանքները կատարվում էին ամբողջ տոհմի ուժերով։ Կարևորը այս դեպքում այն է, որ այն երկրամասերում, ուր քար չկար, ինչպիսին էլ չինված լինեին գերեզմանափոսերը և մանավանդ նրանց արտաքին մասը, ժամանակի ընթացքում անձրևն ու քամին բոլորը պետք է հարթեր, իսկ ավելի ուշ պետք է մոռացվեր այդ վայրի նշանակությունը այն կարող էր հերկվել ու դառնալ ցանքադաշտի մաս։ Հետագայում այդ վայրը զանազան նպատակներով մշակելու հետևանքով, կամ միայն պատահականորեն, կարող են երևան գալ այդպիսի դամբարանները. հենց այդպիսի պատահական ձևով էլ, մեծ մասամբ, նրանք հայտնաբերվում են քարազուրկ երկրներում։ Մինչդեռ Հայաստանում այդ գերեզմանները քարաշեն լինելու պատճառով, հազարամյակների ընթացքում մնացել են անվթար. միայն Սովետական Հայաստանի սահմաններում տասնյակ հազար այդպիսի գերեզմաններ կան և դրանցից յուրաքանչյուրը մի փորրիկ թանգարան է, քանի որ վաղեմի ժամանակներում սովորություն է եղել ննջեցյալի հետ թաղել նաև նրա զենքերը, զարդերը, կենցաղային իրեր՝ կերակրամաններ, ջրամաններ և այլն։

Շինանյութի համար քարի յուրացումը Հայաստանում կատարվել է, այսպիսով, մարդկության կյանքի արշալույսին, և եղել է այդ նպատակով օգտագործվող ամենահիմնական և ամենատարածված նյութը։ Այսպես ուրեմն, մի կողմից՝ շինանյութի համար քարի յուրացումը Հայաստանում կատարվել է մարդկության կյանքի արշալույսին, մյուս կողմից՝ տեխնիկայի գրեթե բացակայության պայմաններում, այդ դժվարին գործը հնարավոր էր իրականացնել միմիայն հասարակության համայնական կարգերի և դրա հետևանքով համայնական աշխատանքի շնորհիվ։

Հասարակության տեխնիկայի և տնտեսության զարգացման հետագա վերելքի արդյունքով քայքայվեց նախնադարյան համայնական հասարակությունը. բայց նրա ստեղծագործած տեխնիկական և մանավանդ մտածողության շատ երևույթներ շարունակեցին իրենց գոյությունը հետագա հասարակությունների կյանքում։ Եվ այդ միանգամայն բնական է. մարդկային հասարակություններից ամենաերկարատևը եղել է նախնադարյան համայնական հասարակությունը. նրա կյանքի տևողության երկրագնդի հավասարապես բոլոր մասերում հաշվվում է մի քանի հարյուր հազար տարի, մինչդեռ հետագա բոլոր հասարակությունների կյանքի տևողությունը միասին վերցրած՝ միայն մի քանի հազար տարի է (օրինակ՝ Հայաստանում շուրջը երեք հազար)։ Բնական է, որ այդքան երկարատև հասարակության կյանքի ընթացքում ստեղծված հասկացողությունները, հավատալիքները ու սնահավատությունները և հասարակական կյանքի այլ երևույթներ, որոնք միս ու արյուն էին դարձել հարյուր հազարավոր տարիների ընթացքում, չնայած հասարակարգի և գաղափարախոսության հետագա փոփոխություններին՝ դեռ շատ երկար պիտի ապրեին ժողովուրդների մեջ. և իրոք հենց այդպես էլ եղել է։ XX դարի սկզբներին Հայաստանում հավաքված ազգագրական նյութերի մեջ նշված են մեծ քանակությամբ մնացուկներ, որոնք գալիս են այդ հնագույն ժամանակներից։

Քննվող հարցի, առնչությամբ այդ բոլորի մեջ կարևորը այն է, որ մինչև քսաներորդ դարն

[1] Ս. Բարխուդարյան. Վելիրուսի երկիրը —Նյութեր հին Հայաստանի պատմության, հատ. I, Երևան, 1935։

էլ շինարարական բազմաթիվ աշխատանքներ կատարվում էին համայնական ուժերով, կամ ազգ ու բարեկամների ու հարևանների աջակցությամբ. ինչպես օրինակ՝ տուն շինելու ընթացքում առավել ծանր աշխատանքներին այդպիսի կոլեկտիվ օժանդակություն ցույց տալը, գերաններ բարձրացնելը, ծանր քարեր տեղափոխելն ու տեղադրելը, ննջեցյալներին թաղելիս օգնելը և գերեզմանաքար քաշելը, հասարակական նշանակություն ունեցող կառուցումներին սիրահոժար օժանդակելը՝ օրինակ ձիթհաններ կառուցելուն, առուներ ու ջրանցքներ հանելուն, ճանապարհներ, կամուրջներ և եկեղեցիներ շինելուն համայնքով օգնելը և այլն։

Համայնական հասարակությունից փոխանցված այդ օգտակար սովորությունը Հայաստանի պայմաններում ավելի երկարատև և կենսունակ էր նաև այն պատճառով, որ հիմնական շինանյութը մնում էր դարձյալ քարը, այդ ծանր և դժվար մշակելի նյութը։ Սեփականատիրական հասարակության պայմաններում ժողովրդի մեծ մասը միայն իր ընտանիքի ուժերով չէր կարող հաղթահարել քարե շինանյութերի դժվարին գործը, այդ պատճառով էլ կոլեկտիվ աշխատակցության սովորույթը պահպանվում էր և իր օգտակար դերը կատարում շատ դեպքերում։

Անդրադառնալով մեր միջնադարյան փայլուն հուշարձանների կերտման գործին, պետք է հենց սկզբից ասենք, որ այստեղ ևս շատ մեծ է եղել կոլեկտիվ աշխատակցությունն ու ժողովրդի մասնակցությունը։

Քրիստոնեությունը Հայաստանում դառնալով պետական կրոն, անխնա պայքար սկսեց հեթանոս գաղափարախոսության և հավատալիքների դեմ։ Ապացուցված է, սակայն, որ այդ պայքարը երկու հիմնական ուղղությամբ էր ընթանում. մի կողմից՝ բռնի կերպով մտցվում էին նոր կրոնի հետ կապված ծիսակատարություններ և սովորություններ, մյուս կողմից՝ անզոր լինելով հաղթահարել հեթանոս կրոնի դարավոր և արմատացած սովորություններն ու հասկացողությունները, դրանց տրվում էր նոր բացատրություն, հաշտեցվում էին դրանք նոր կրոնի հետ և սրբագործվում։

Այս վերջին կարգին էր պատկանում նաև հասարակական նշանակություն ունեցող կրոնական կառուցումներին ժողովրդական մասնակցություն ցույց տալու սովորությունը. այդ բանը՝ օգտակար էր նոր կրոնի համար, և՝ հեշտ, քանի որ խոստացվում էր մասնակիցներին վարձատրություն հանդերձյալ աշխարհում, հոգու փրկություն։

Բարեբախտաբար մեր մատենագրության հնագույն հուշարձաններից մեկում՝ Ագաթանգեղոսի պատմության մեջ, պահպանվել է այս երևույթի մասին որոշակի հիշատակություն։ Ինչպես հայտնի է՝ առաջին քրիստոնեական շենքերը Հայաստանում հիմնարկվել են Գրիգոր Լուսավորչի ձեռքով. դրանք հռիփսիմյան կույսերի նահատակության վայրում կառուցված վկայարաններն են։ Պատմագրի նկարագրության համաձայն Գ. Լուսավորիչը ժողովրդի առաջ իր կրոնի հավատամքը պարզաբանելուց և «երկնային դրախտ» խոստանալուց հետո առաջարկում է՝

«Եւ արդ եկայք շինեսցուք զվկայարանսն, փոխել զվկայսս ի հանգիստ, զի և սոքա փոխեսցեն զձեզ ի նորոգութիւն»։

«Եւ զայս ասացեալ՝ հրամայեաց զի զնիւթ շինուածոյն վաղվաղակի պատրաստեսցեն։ Եւ ամենայն բազմութեան մարդկանն լուեալ զայն՝ իւրաքանչիւր ընթացան պատրաստել զնիւթսն։ Եւ կուտէին ի հրամայեալ տեղիսն ոմն վէմ, ոմն քար, ոմն աղիւս, ոմն զմայր փայտն, պատրաստէին խնդալից փութով և մեծաւ երկիւղիւ»։

Շարունակության մեջ պատմագիրը ավելացնում է.

«Եւ մէն մի իւրաքանչիւր ամենայն բազմութեանն սատարութիւն ի ձեռն առեալ, ըստ գեղեցկագիր յարմարելոյ հիմնարկին ի կատարումն շինուածոն կանգնեցին։ Ամենայն որ ձեռն ի գործ արկեալ, և կանանոյն անգամ սատարեալ ըստ իւրեանց տկարութեան կանացի ուժոյն, և այսպէս առ հասարակ գործէին զգործն հաւատովք և մեծաւ և կի զկնւ, զի մի ոչ ամենեքին տեսան հղեալ ի փրկութենէ շնորհացն, ի թ կութենն զրկեսցի»[1]։

Միանգամայն պարզ է, որ դեռևս հեթանոս ամբոխը, որի առաջ քարոզում էր Գ. Լուսավորիչը, նոր կրոնի մշուշապատ գաղափարներից չէր, որ անմիջապես ոգևորվեց և դիմեց շինարարական գործունեության. նրան մղում էր հեթանոսական դեռևս կենդանի տրադիցիան, որ սովոր ու հարազատ էր նրա ներքնաշխարհին. նոր կրոնի հիմնադիրները ճարպկորեն ու խելացի կերպով կարողացան ժողովրդի այդ հին տրադիցիաներին նոր ուղղություն տալ և օգտագործել։

Մեկ որ նոր գաղափարախոսությունը ընդունեց ու սրբագործեց ժողովրդական աշխատակցությունը հասարակական բնույթի կառուցումների մեջ և իր հեղինակավոր հիմնադրի՝ Գ. Լու-

[1] Ագաթանգեղայ, Պատմութիւն Հայոց, էջ 393—394, Տփղիս, 1909։

սավորչի ձեռքով, պարզ է, որ այն պիտի հետագայում ևս օգտագործվեր եկեղեցու կողմից։ Եվ իրոք, հայ ժողովրդի մեջ հասարակական և նույնիսկ մասնավոր օգտակար կառուցումների ժամանակ մարդիկ միշտ իրենց սիրահոժար և կարևոր օժանդակությունն են ցուցաբերել, ինչ փույթ, որ այդ հասարակականապես օգտակար սովորությունը պարուրվել է «հոգու փրկության», «վարձքի» և նման հասկացողությունների կրոնական շղարշով։

Ժողովրդի այդ օգտակար գործակցության պատկերը ակնառու դարձնելու համար բերենք մի քանի փաստեր. նախ կրոնական շենքերի վերաբերյալ։

Տարածված է մի սխալ պատկերացում, որ իբր այդ տիպի բազմաթիվ և հոյակապ ճարտարապետական կառուցվածքները աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ջանքի և նյութական առատ միջոցների արդյունք են. մինչդեռ բազմաթիվ փաստերն ապացուցում են, որ հասարակության լայն խավերին պատկանող շատ մարդիկ, ըստ ամենայնի, իրենց լուման են մտցրել դրանց կերտման գործի մեջ, տրամադրելով և՛ դրամական միջոցներ, և՛ անձնական օժանդակություն։ Մեծամեծ կառուցումներ նախաձեռնող հոգևոր և աշխարհիկ ֆեոդալներն միշտ նկատի են ունեցել հասարակական այդ օժանդակությունը և հենվել են դրա վրա։ Բազմաթիվ շինարարական արձանագրությունների մեջ արտահայտված է հասարակական օժանդակության այս երևույթը. շինարարություններին օժանդակող մարդկանց ցանկի՝ թագավորների, թագուհիների և մեծամեծ իշխանների կողքին, արձանագրված են առանձին հարուստ մարդիկ և սովորական քաղաքացիներ ու գյուղացիներ, ավելի մեծ թվով օժանդակողներ, որոնց անունները հակառակ հանվանե չեն հիշատակվում, այլ միայն նշվում են ընդհանուր «աշխատավորներ» ձևով։ Կան օրինակներ, որոնցից միանգամայն պարզ երևում է, որ շենքի առանձին մասեր շինված են տարբեր անհատների ծախսով և երբեմն նույն շենքի վրա պահպանվել են մի քանի մեկենասների անուններ։

Այսպես, Սանահնի վանքում Ամենափրկիչ եկեղեցուն կից 1181 թվականին շինվում է մի հոյակապ գավիթ. շինության հովանավորողներ են Հովհաննես առաջնորդը, ամիր Քուրդ իշխանը և նշանավոր մտավորական Գրիգոր Տուտևորդին, իսկ գավթի ներսի շորս սյուներից յուրաքանչյուրը շինվել են Կյուրիկե Գ. թագավորի երեք աղջիկների և վերջիններիս մոր՝ Թամարի հորաքույր Ռուսուդանի միջոցներով։ Կառուցողական արձանագրությունների մեջ մնացել են այս բոլոր մասնակիցների հիշատակությունները։ Որպես օրինակ բերենք սյուներից մեկի վրա փորագրված արձանագրությունը.

Ես Բաւրինա, նոյն արքայի
դուստր, քոյր Մարիամու
կանգնեցի զսիւնս զայս
եւ զիս յիշեցէք ի Քս.[1]

Գանձասարի մոտ Պառավածոր կոչվող գյուղատեղում գտնվում են երկու կիսավեր եկեղեցիներ, որոնցից մեկի պատի վրայի արձանագրությունը պատմում է շինության հետևյալ պարագաները.

:ՈԻ: /= 1181/ թուին և իշխանութեան
Սմպատա ես Բարսեղ երէց ու Սարգիս և այլ
եղբարքս և Սանասի իրիցո որդիք մեր ժո-
ղովրդովս շինեցամ զեկեղեցիս և բերամ ղջուրս...[2]

Դիլիջանից երկու-երեք կիլոմետր հեռու գտնվում է Ջուխտակ վանքը, շինված XIII դարի սկզբին, եկեղեցու ներսի խորաններից երկուսը շինվել են տարբեր մարդկանց ծախսով, որոնց հիշատակին և գրվել են համապատասխան արձանագրություններ. այսպես՝ հյուսիսային խորանի մուտքի գլխին գրված է.

Ի թվ : ՈԾՁ : /=1207/, ես մայրացեալս
շինեցի զխորանս ի հալալ արդեանց իմոց և
առաջնորդք սորա ետուն ի տարումն... ժամ
տեառնընդառաջին. խափանողքն դատին ի տեառնէ.

---

[1] Գ. Ղլտֆաղարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 114, Երևան, 1947։

[2] Մակար. եպիսկ. Բարխուդարեանց, Արցախ, 180, Բաքու, 1893։

Իսկ հարավային խորանի մուտքի գլխին՝

Յայսմ խորանի : Ա : ժամ ի տաւնի սուրբ
Սարգսին՝ Սարդսին արասցեն, զի նորա
արդեամբք շինեցաւ խորանս, ով զժամս
խափանէ՝ դատի ի տեառնէ[1]։

Նոր Բայազետի շրջանի Կարմիր (Ղուլալի) գյուղի եկեղեցին ունի հետևյալ շինարարական արձանագրությունը.

«...Շինեցաւ սբ. տաճարս թվին ՌՃԻԳ (= 1674).
Ես տանուտէր Գասպարս և քահանայքս և
ժողովուրդս միաբան շինեցաք սուրբ տաճարս...[2]։

Շամախու մոտ (Ադրբեջան) Մեյսարի վանքի շինարարական ընդարձակ արձանագրությունների մեջ (XVII դար) հիշատակվում են բազմաթիվ մարդկանց և կանանց անուններ, որոնք օժանդակել են շենքերի կառուցման գործին, և որպես ամփոփում հիշված են՝

«...Անտոն և Վլաս վարդապետացն, մանավանգ
սբ. ուխտիս աշխատաւորաց, նուէրք և ընձայ բերողացն...[3]։

Մարտունու շրջանի Զորագյուղ գյուղի մոտ է գտնվում Մասրուց անապատ կոչվող հին վանքը. XVII դարի սկզբին վանքում կատարվել են մեծ նորոգումներ, այդ առթիվ գրված արձանագրություններից մեկն ունի հետևյալ բովանդակությունը.

Յիշեցէք Քս. զԲսբէն, որ սայլն
շնորհեց վասն քարի կրել[ոյն]...
թվ. : ՌՄ : (= 1601)[4]։

Կրոնական շենքերին վերաբերող նման օրինակներ կարող էինք բերել տասնյակներով, սակայն բավական համարելով՝ թվենք այլ տիպի հուշարձանների վերաբերյալ հասարակական օժանդակության փաստերը։

Հայտնի է, թե միջին դարերում որքան մեծ գեր են կատարել բերդերն ու ամրոցները հայրենի երկրի և ժողովրդի պաշտպանության գործում. բերդաշինարարությունը համարվել է հայրենասիրական գործ և վայելել է ժողովրդի ամենալայն համակրությունը։

Անիի պարիսպների և բրգերի վրա պահպանվել են 22 արձանագրություն, որոնք ունեն շինարարական բովանդակություն. պարզվում է, որ պարիսպների առանձին տեղամասեր և բուրգեր շինվել են տարբեր մարդկանց միջոցով, դրանց մեջ կան ինչպես իշխանների և մեծատունների, նույնպես և սովորական մարդկանց անուններ. հիշատակության արժանի է, որ կանայք ևս մեծ մասնակցություն են ցուցաբերել այդ հայրենասիրական գործին. պահպանվել են բրգերի շինությանը նպաստած նաև երեք կանանց անուններ՝ Զազա, Մամախաթուն և Շանուշ։ Բավականանանք միայն վերջինիս վերաբերող արձանագրությամբ

Ի :ՌԿԸ: թվին (=1219) շնորհիւն
Քրիստոսի ես Մամախաթունս, դուստր
Խաշերեսին Լատեցւոյ, անժամ ի Քրիստոս
գնացի։ Յիմ հաւրն ի հալալ դրամէն
որ ինձ տուեալ էր, անյիշատակ էի.
շինեցի զբուրջս, յիշատակ ինձ առ
Քրիստոս։ Ակդ ալաշնմ, որք կարդայք
Մեզ թողութիւն խնդրեցէք ի Քրիստոսէն։

[1] Մ. Բարխուդարեանց, Արցախ, Բաքու., 1895, էջեր՝ 362, 363։

[2] Սմբատեանց, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գավառի, էջ 48, Վաղարշապատ, 1893· Շահխաթունեանց, Ստորագրութիւն, Բ., 211։

[3] Ջալալեանց, Ստորագրութիւն, Բ. 399—400։

[4] Մեր հուշատետրից։

[5] Առնում ենք ակադ. Հ. Օրբելու ձեռագիր՝ «Անիի արձանագրություններու ժողովածուից. սխալաշատ հրատարակություններ տե՛ս Հ. Սարգսյան, Տեղագրություն, 111 և Ալիշան, Շիրակ, էջ 43։

Բերդաշինարարության ասպարեզում ժողովրդի մասնակցության ավելի ցցուն և սրտառուչ պատկեր է արտահայտված Կարսի բերդի պարիսպների ու բուրգերի վրա պահպանված արձանագրությունների մեջ. ահա դրանցից մեկը.

Ի թվիս :ՈՁԳ: (= 1234)
Շնորհիւն Այ և ողորմութեամբ
թագաւորին մերո Ըռուսուդանայ.
մեք՝ կարուց քրիստոնայքս՝ մեծ
և փոքր շինեցաք զբրջներս, յիշա-
տակ մեզ և պատրոնին մերոյ[1]:

Պատմական Ապահունիք գավառում է գտնվում Հայաստանի հին բնակավայրերից ու միջնադարյան մարդաշատ քաղաքներից մեկը՝ Մանազկերտը. քաղաքն ունեցել է դարաշրջանին համուկ ամուր բերդապարիսպներ ու բուրգեր. դրանցից մի քանիսի վրա պահպանվել են շինարարական արձանագրություններ, որոնց բովանդակությունից պարզվում է, որ շինվել են տարբեր մարդկանց միջոցներով. ահա դրանցից մեկը.

Ի թվականիս հայոց :ՉՁԳ: (= 1334)
կանգնեցաւ բուրգս ձեռամբ Կիրակոսին,
Աստուած ողորմի[2]:

Միջնադարյան հռչակավոր գիտնական և մտածող Գրիգոր Տաթևացին վախճանվել է 1510 թ. և թաղվել Տաթևի վանքի հարավային սրահում. այդ մեծ մտածողի հիշատակը մնացել է վառ հետագա սերունդների ու ժողովրդի մեջ. դարեր հետո, 1787 թ. Սիսիանի Բռնակոթ գյուղի ժողովրդի միջոցներով նրա գերեզմանի վրա կառուցվում է հուշարձան. Հուշարձանի վրա պահպանված ընդարձակ շինարարական արձանագրության համաձայն այդ գեղեցիկ կոթողի կերտմանն իրենց օժանդակությունն են բերել Բռնակոթցի քսան տղամարդ և չորս կանայք, ընդամենը 24 հոգի, որոնց բոլորի անունները գրված են արձանագրության մեջ[3]:

Արձանագրական այս կարգի ուղղակի ցուցումներից բացի, հուշարձանների կերտման գործում հասարակական մասնակցության մասին կարելի է մի երկու ավելի ընդհանուր, բայց կարևոր ցուցումներ ևս ավելացնել:

Դրանք կարճ արձանագրություններ են, որոնք հանդիպում ենք հենց հուշարձանների պատերին. դրանք գրված են լինում կամ առանձնակի, կամ շինարարական բնույթի արձանագրությունների վերջում, որպես ընդհանրացում կամ լրացում. առաջին տեսակից որպես օրինակ հիշատակենք Հառիճավանքի արևելյան պատի քիվի և Նորավանքի (Եղեգնաձորի շրջան) Բուրթելաշեն եռահարկ եկեղեցու արևելյան ճակատի նույն ոճով գրված մի տողանի արձանագրությունները, որտեղ մի կարճ նախադասությամբ հիշատակված են բոլոր աշխատավորներն ընդհանրապես.

ՏԵՐ ԱՍՏՎԱԾ ՈՂՈՐՄԵԱ ԱՇԽԱՏԱՒՈՐԱՑ

Երկրորդ տիպի արձանագրությունները ավելի մեծ թիվ են կազմում. այսպես՝ Անիի պարիսպների մի հատվածը շինել է Գևորգի որդի Սարգիսը և գրել իր հիշատակարան—արձանագրությունը, որի մեջ մեկենասի անվան հիշատակությանը հաջորդում է հետևյալը.

...Ընդ Նմին և զաշխատողքս յիշեցէք...

Բերենք նաև մի այլ օրինակ Գոշավանքի հուշարձաններից.

Տէր աստուած ողորմեա Խաչատուր
վարդապետին և Բարսղին, շինողաց
եկեղեցւոյս. և ամենայն աշխատողացն
ի սմա. թուին :ՉԴ: (= 1255):

---

[1] Н. А. Орбели, Армянские надписи на камне. „Христианский Восток", V, II, 1917, Նաև Բարխուդարեան, Տեղագրութիւնք, 104: Ալիշան, Շիրակ, 8․:

[2] Սուքիասեանց Դ. Վ., Թորոս աղբար, Բ, 278:

[3] Արձանագրությունը տե՛ս Փափազեան Մ. Հնութիւնք Վանորէից Հայոց, Է և Ե. Լալաեան, «Ազգագրական Հանդէս», 3-րդ, 135:

Այս կարգի հիշատակագրություններն անշուշտ վերաբերում են շինարարության վրա աշխատած բոլոր մարդկանց և վարձով և, նամանավանդ, հասարակական օժանդակության կարգով օժանդակողներին, որոնց բոլորի անունները մեկ առ մեկ հիշատակելը քարի վրա գրվող արձանագրության մեջ դժվար էր և տեղն էլ չէր բավականացնի։

Ժողովրդի գերը մատնանշող մի այլ երևույթ կարելի է համարել նաև հետևյալը. ինչպես հայտնի է մեր հնագույն, VII—XI դարերի հուշարձանների երեսպատման և ձևավոր քարերի վրա կան երկրաչափական գծերից և առանձին տառերով արված նշաններ, որոնք ճարտարապետության պատմության մեջ անվանվում են «վարպետների նշաններ». դրանք վարձու վարպետների արած նշաններն են իրենց մշակած քարերի վրա, որպեսզի դրանց թվին համապատասխան վարձատրություն ստանան։ Հիմնականում այս եզրակացությունը ճիշտ է, մանավանդ որ նույն նշանները հանդիպում են ժամանակով իրար մոտիկ տարբեր հուշարձանների վրա, որ վկայում է, թե նրանց փորագրողը եղել է հմուտ վարպետ և աշխատել է տարբեր շենքերի կառուցման վրա։ Սակայն այդ բոլոր հուշարձանների վրա էլ վարպետների նշանները արված են քարերի ընդհանուր թվի շատ փոքր մասի վրա. հետևաբար հարց է ծագում՝ հապա նշան չունեցող և շատ ավելի մեծ թիվ կազմող քարերը ո՞վ է տաշել և ի՞նչ հաշվով է վարձատրվել։ Որպես փաստ մեր ասածներին հիշատակենք Սիսիանի հուշարձանը, որը համարվում է VII դարի շինվածք։ Նրա վրա, ըստ մեր դիտումների, վարպետների նշանները ամենաշատն են. այսպես, այդ մեծ հուշարձանի ներսի և դրսի հազարավոր մշակված քարերի վրա մենք հաշվել ենք վարպետների զանազան նշաններ ունեցող ընդամենը 296 քար։ Այդ թիվը թերևս կարելի է կրկնապատկել, նկատի ունենալով, որ հատկապես վերի մասի եղածները, կարող էին մեր աչքից վրրպել, մի մասն էլ կորչել՝ հետագա նորոգությունների ժամանակ. այդ լրացումները կարող ենք ընդունել, որ 500 քար է եղել նշանագրված, հետևաբար վարձատրվել են միայն այդ 500 քարերը տաշող վարպետները. իսկ ո՞վքեր են մնացած հազարավոր քարերի անհայտ տաշողները, ի՞նչպես են նրանք վարձատրվել։

Անհրաժեշտ է նշել նաև որ, նշաններ կրող և չկրող քարերի դասավորման մեջ ոչ մի օրինաչափություն չի նկատվել և անհնար է ենթադրել, որ նշանագրված երկու քարեր կարող են սահման լինել նրանց միջի տարածության չնշանագրված քարերը ևս նույն վարպետի աշխատանքը համարելու համար. ե այդ հենց այն պարզ պատճառով, որ հաջորդ նշանագրված քարը բոլորովին այլ նշան ունի իր վրա։ Սիսիանի հուշարձանի մեր նշած 296 նշանները բաղկացած են 39 խմբից, այսինքն՝ կրկնված են 39 տարբեր նշաններ տարբեր քանակներով և յուրաքանչյուր նշան անկանոն կերպով տեղադրված է շենքի ստորին շարքից մինչև ամենավերին՝ գմբեթի մասը։

Արդ, նկատի ունենալով մեր ասածներն այդ նշանների վերաբերյալ և հաշվի առնելով այն բոլորն ինչ ասվեց ժողովրդի կողմից ինչքով և անձամբ հուշարձանների կառուցմանը օժանդակելու վերաբերյալ, կարծում ենք, որ նման շենքերի վրա վարպետների նշան կրող քարերը պատկանում են վարձատրվի վարպետներին և դրանք իրոք նրանց վարձքի հաշվառման համար են դրվել, իսկ մնացածները, որ քանակով ավելի շատ են և նշաններ չունեն, մշակել են զանազան մարդիկ, անվարձ, որպես անձնական օժանդակություն շենքի կառուցմանը. այսպիսի դեպքում ուրեմն՝ պիտի ընդունել, որ դրանք միաժամանակ վարպետ, քարտաշ մարդիկ են, որոնք ոչ թե ինչքով, այլ անձնական աշխատանքով են իրենց լուման ներդրել հուշարձանի կերտման գործին։ Որ քարտաշ և շինարար վարպետները իրենց անձնական աշխատանքով, անվարձ մասնակցել և օժանդակել են հուշարձանների կերտման գործին, ցույց է տալիս Հաղարծնի վանքում պահպանված հետևյալ արձանագրությունը.

Քրիստոս Աստուած ողորմեսցի Աբասաձորո քարահատույն, որ զտներոյս տեղս հատին։

Ժողովրդի մասնակցության պատկերը լրացնելու համար հիշատակենք նաև մեր արձանագրական նյութերում պահպանված այն հսկայական բանակի վավերագրերը, որոնք վերաբերում են վանքերին և եկեղեցիներին տրված մեծամեծ նվիրատվությունները՝ շարժական և անշարժ գույքով ու դրամով. դրանց մեջ թեև չի նշված նպատակը, սակայն պարզ է, որ այդ նվերների մի խոշոր մասը գործադրվում էր նոր հուշարձանների կառուցման և հների նորոգման նպատակներով։

* *
*

Հուշարձանների կերտման գործի մեջ ժողովրդի տարբեր խավերի և տարբեր ձևերի օժանդակության մասին մեջ բերվածները միայն սակավաթիվ օրինակներ են շատ ավելի մեծ բանակություն կազմող նման նյութերից։ Սակայն պետք է հիշատակել, որ նման տեղեկություններ

մեր բոլոր հուշարձանների վրա չեն պահպանվել. և դա միանգամայն հասկանալի է, ամեն դեպքում շինարարությանը մասնակցած անձանց անունները հիշատակելը ոչ պարտադիր էր և ոչ էլ հնարավոր. դրա գլխավոր պատճառն այն էր, որ հուշարձանի վրա այդպիսի ընդարձակ տեղեկություններ գրելը դժվար գործ էր, շատ հավանական է. որ ավելի մանրամասն տեղեկություններ այս ու այն հուշարձանի շինարարության մանրամասնությունների վերաբերյալ գրված կլինեին թղթի վրա առանձնակի կամ հատուկ մատյաններում, որոնց մեծ մասը դժբախտաբար մեզ չեն հասել։

Այս կարգի սակավաթիվ փաստաթղթերից մեզ հասած Սանահնի վանքի մատյանը «Քյոթուկը» և Տաթևի վանքի արխիվի մասին պատմագիր Ստեփաննոս Օրբելյանի վկայությունները, ինչպես նաև ավելի ուշ՝ հայ գաղթավայրերում պահպանված գրավոր հիշատակարանները՝ այն տեղերում կատարված շինարարություններին վերաբերող՝ հաստատում են մեր ասածները։

Շինարարական գործում հասարակական օժանդակության այս օգտակար տրադիցիան գարերի ընթացքում այնպես ուժեղ էր արմատացել հայ ժողովրդի մեջ, որ երբ պատմական աղետների հետևանքով նա ստիպված եղավ մեծամեծ հատվածներով հեռանալ իր հայրենիքից և գաղթականի ցուպը ձեռքին ապաստան որոնել հեռավոր և օտար երկրներում, բոլոր այն տեղերում ևս ուր նա կարողանում էր համեմատաբար տևական նստակյաց կյանք վարել՝ այդ արդեն արմատացած սովորությունը իր կենսական դերն էր խաղում գաղթական այդ հատվածի ինքնապաշտպանության և ազգային դեմքի պահպանության գործում։ Երկար թափառումներից հետո Անիի և Շիրակի հոծ գաղթականների մի հատված դիմեց դեպի Ղրիմ թերակղզին. նրանք բնակվեցին «Ֆրանկ-հիսար»— Կաֆա քաղաքում, բայց քաղաքը հնարավորություն չուներ բոլորին տեղավորել պարիսպներից ներս, այդ պատճառով էլ նրա արևելյան կողմում, պարիսպներից դուրս, շինվում է հայկական մի մեծ և նոր թաղ։ XIV դարում, թաթարների անվերջ հարձակումների սպառնալիքն ստիպում է Կաֆայի հայերին այդ թաղամասը պարսպափակել և ջանվացոց «Ֆրանկ հիսարը» ու նորաշեն «Հայոց բերդը», միանում են իրար և ստեղծվում է մեծ ու անառիկ ամրոց — քաղաք։ Հետաքրքիրը մեզ համար այդ բերդի, «Հայոց բերդի», շինարարական մանրամասնություններն են, որն առնելով Կաֆայի (Ֆեոդոսիա) Յայսմաւուրքի հիշատակարանից, մեջ են բերում ուսումնասիրողները. այսպես Բժշկյանը գրում է՝

«Եւ առ դիւրութեան որոշեցին զայս չափ թուով քարինս առ իւրաքանչիւր իշխան ըստ մեծութեան վիճակին։
Եւ ի սահմանի շինութեան իւրաքանչիւրոց եղին
ի պարիսպս զյիշատակարանս անուանց իւրեանց։ Զայս սովորութիւն պահէին Քէֆէցի Հայք մինչև ցյետին ժամանակ»։

Այս նկարագրության մեջ երևան է գալիս բերդաշինության ասպարեզում Անիի և Կարսի վերաբերյալ մեր նկարագրածների ճիշտ կրկնությունը, որն ապացույց է մի կողմից շինարարական սովորությունների ուժեղ արմատավորվածությանը մեր ժողովրդի մեջ և նրա գործադրմանը դարեր հետո՝ անգամ գաղթավայրում մյուս կողմից՝ հաստատորեն կարելի է պնդել, որ եթե հիշատակարանի մեջ միայն իշխանների (իմա հարուստ վաճառականների) անուններ են գրվել, ապա մենք դրա հետևում պիտի տեսնենք նաև հասարակ ժողովրդին, քանի որ պաշտպանության խնդրով այդ օտար միջավայրում շահագրգռված էր Կաֆայի ամբողջ բնակչությունը. և եթե հարուստները մեծ տեղամասեր են կառուցում և իրենց անունով կնքում, ապա չքավոր ժողովուրդը անձամբ պիտի մասնակցեր ընդհանուր աշխատանքներին, նա իր հատուկ տեղամասը չէր կարող ունենալ, հետևաբար և չի հիշատակվել։

Շիրակի այդ նույն գաղթականության ուրիշ մասեր, ինչպես հայտնի է, հասան Լեհաստան և տեղավորվեցին նրա շատ քաղաքներում, այդ թվում նաև Կամենիցում, որտեղ XV—XVI դարերում շինվել են մի քանի եկեղեցիներ։ Այստեղի ս. Նիկողայոս եկեղեցու շինության հիշատակարանի մեջ գրված է.

...և ժողովեցան միատեղ՝ համօրէն ժողովուրդ
մեծ և փոքր, և սկսան շինել յուսալով այ օգնութե,
որ էր սպկով /սպիտակով — գրամով/. որ իւր անձամբ.

---

[1] Բժշկեան Մ., Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 132—313, Վենետիկ, 1830։ Համեմատիր նաև Ի. Շահազիզ, Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք, «Ազգագրական հանդէս», VII—VIII, էջ 20։

որն օրաներով, որն եղներով, որ իւր ուժով և կատա-
րեցին...[1]

Նույն քաղաքի Աստվածածին եկեղեցու կառուցման հիշատակարանը հաղորդում է, որ հարյուրավոր մարդիկ են նպաստել շինությանը... «զի ոմանք զինչս ետուն. և ոմանք աշխատելն և ոմանք զորդորելն...[2]

Եվ եթե ժողովուրդը ստեղծված դարավոր սովորության շնորհիվ մասնակցել է պատմական հուշարձանների կերտման գործին, բնականաբար նույնպիսի եռանդով նա մասնակցել է նաև բնական ու պատմահասարակական աղետների հետևանքով ավերված հուշարձանների վերանորոգման գործին։

Հայ ժողովրդի պատմական անցյալը նույն անդրադարձումն է ունեցել նաև հուշարձանների կենսագրության վրա. երբ ներխուժող թշնամիները ասպատակել են երկիրը և սրի, կոտորածի, գերեվարության ենթարկել ժողովրդին, միաժամանակ քանդել, այրել ու ավերել են նաև քաղաքներն ու գյուղերը և այդ տեղերում կանգնած հուշարձանները. գերեվարելով ժողովրդին՝ նրա հետ տարել են նաև հուշարձաններում կուտակված ժողովրդի ստեղծագործած դրական և արվեստի շարժական կոթողները։ Այսպիսի սոսկալի աղետների աղեխարշ նկարագրությունները հսկայական էջեր են գրավել մեր մատենագիրների, ժամանակագիրների և հիշատակարանների մեջ։ Բայց ամեն անգամ, երբ անցել է ավերող հեղեղը և ժողովուրդն սկսել է վերաշինել ավերված երկիրը, կարկատել իր հայրենական օջախը, միջոցներ են հավաքել նաև գերեվարությունից փրկանքի միջոցով վերադարձնելու նաև իր հարազատներին. դրան զուգընթաց ժողովուրդը ձեռնամուխ է եղել նաև կիսավեր հուշարձանների նորոգմանը և գերի տարված կուլտուր-պատմական ու գեղարվեստական արժեքների հետքերմանը, նույնպես փրկագնի միջոցով. կարելի է համարձակ ասել, որ հուշարձանների կերտումը, նրանց խնամքն ու պահպանությունը նույն արժեքն են ունեցել, ինչ որ սեփական կյանքը ժողովրդի համար, և այդ սովորության հազարամյակների դոյությունն ու կիրառումը այն աստիճան է արմատացել մեր ժողովրդի մեջ, որ ի վերջո վերածվել ինքնապահպանության բնազդի կարևոր մի ձևի։

Հայտնի է, որ Շիրակից մեկնած գաղթականությունն իր հետ գաղթավայրեր է տարել եկեղեցիների գեղարվեստորեն քանդակված դռներ, գրքակալներ և այլ շարժական իրեր։ Բայց հատկապես զարմանալի է, որ երբ XVIII դարի վերջերին Ղրիմի հայերը տեղափոխվեցին Նոր-Նախիջևան, ոչ միայն այդ համեմատաբար թեթև իրերն իրենց հետ վերցրին, այլև արդեն Ղրիմում կերտված բազմաթիվ ծանր խաչքարեր։ Արվեստի և մշակույթի հուշարձանների նկատմամբ տածած այդ սիրո մեծությունը հասկանալու համար պիտի պատկերացնել տեղափոխության միջոցների այն ժամանակվա դժվարությունները. գրեթե բռնի տեղահանությունը, մի ամբողջ տարի ճանապարհներին թափառելը, ցրտից ու սովից բազմաթիվ անտուն մարդկանց մահանալը. և չնայած այդ բոլոր դժվարություններին հազարավոր կիլոգրամ քաշ ունեցող այդ չքնաղ խաչքարերը բերել հասցվել են Նոր-Նախիջևան և ամրացվել նորակառույց հուշարձանների։

Մեր նպատակն էր ցույց տալ ժողովրդի գործուն մասնակցությունը մեր հուշարձանների՝ առավելապես ճարտարապետական և քարաշեն այն մեծ հուշարձանների կերտման գործին, որոնց կառուցումը կապված էր մեծամեծ միջոցների և աշխատանքի հետ։ Բայց հազարավոր մանր տիպի այլ հուշարձաններ, կոթողներ, խաչքարեր, որոնք զարդարում են Հայաստանի շենքերն ու հանդերը և շինված են տարբեր մարդկանց միայն անհատական ջանքերով, մենք նկատի չունենանք, որովհետև ինքնին պարզ է, որ դրանց կերտման գործը մեծ միջոցներ չէր պահանջում և շինվել են ամենաբազմազան մարդկանց կողմից. եթե փորձելու լինենք կազմել միայն դրանց շինողների ցանկը՝ ապա այն կպարունակեր հազարավոր անուններ։

Մեր ժողովուրդը, պիտի ասենք միայն, ունեցել է առանձնահատուկ գեղարվեստական ճաշակ ու սեր դեպի քարակերտ հուշարձանները և անսահման մեծ բանակությամբ շինել է այդպիսիները իր դժնդակ պատմության ընթացքում։

Անմիջապես պիտի ավելացնենք, սակայն, որ հայ ժողովուրդը սիրել և ոժանդակություն է ցույց տվել արվեստի և մշակույթի բոլոր բնագավառների հուշարձանների կերտման գործին։

Թեև ներկա հոդվածի նպատակից դուրս է այդ խնդիրներին անդրադառնալը, բայց կարևոր ենք համարում մեջ բերել մեր գրչագիր մատյանների ստեղծման գործի մի երկու օրինակ, հա-

---

[1] Բշկենաց Մ., Հանապարհորդութիւն, էջ 142.
[2] Անդ, էջ 148։

մեմատելու և ցույց տալու համար հայ ժողովրդի գեղարվեստական ու կուլտուրական ընդհանուր ոգին։

Տարոնից Գլաձոր (Վայոց ձոր) է գալիս Ներսեսը և ուսանում է յոթ տարի. ցանկանում է ձեռք բերել աստվածաշունչ. ձեռագիր մատյանները խիստ թանկ էին, իսկ նա աղքատ մարդ էր. նա ստիպված վերադառնում է իր ծննդավայրը և հարազատների մեջ հանգանակություն կազմակերպում. Մլեհը տալիս է 210 սպիտակ, Լևոնը՝ 90 դրամ, Հովանը 90, Թուրանը՝ 30, Դամուրը՝ 30, Մխիթարը 42, Մխիթար հյուսնը՝ 30, Վարդանը՝ 33, Հայրապետը՝ 36, Մարտիրոս Թաշկանը՝ 30, Լուսին ներկարարը՝ 30, Զաքարը՝ 18, Ռամանոսն ու իր մայրը՝ 36, Ֆոանգ Խլաթցին՝ 100, Անտոնը՝ 20, Ումեկն ու իր որդիները 40 դրամ, ընդամենը 1500 դրամ. հավաքելով գրչի հետ պայմանավորված այդ գումարը, նա սրբությամբ պահում է այն, ճամփորդությունների ժամանակ վաճառելով իր փիլոնն ու հողաթափերը, վերջապես կարելս թե նա պիտի հասնի իր նպատակին, բայց գրիչ Դավիթն ապա մարդ է լինում. պահանջում է հավելյալ 300 դրամ ևս. խեղճ Ներսեսը ստիպված է լինում նորից ճամփորդել դեպի Գոգթան և իր ծանոթ եպիսկոպոս Զարարեից խնդրել այդ հավելյալ 300 դրամը ևս, որով նա վերջապես կարողանում է տեր դառնալ գրական այդ հուշարձանին. հետագայում մատյանը ծաղկել է Թորոսը, իսկ Զէլպատան Զարդրանեցին և նրա հորեղբորորդի Տողանը ըստ իրենց կարողության օգնեցին»։ Որով՝ «բայց խարճն. որ եկն այս աստուածաշունչ գրոցս՝ ընդ ամենայն միահամուռ ՌՌՌՃ (2200) դրամ է»[1]։

Բերենք մի երկրորդ, ավելի ցայտուն օրինակ ևս. նույն XIV դարում ձեռնարկվում է Երևանցի գրիչ Նատերին է հանձնարարվում արտագրելու մի ճառընտիր, գործին մասնակցում են 70-ից ավելի մարդ, որոնցից յուրաքանչյուրն իր գրել տված մասի տակ նշել է նաև իր հիշատակարանը՝ որպես ստացող՝ բայց հետաքրքիրն այդ մարդկանց սոցիալական դիրքի պատկերն է, որը պարզ երևում է մեջ բերվող համառոտ ցանկից.

| | |
|---|---|
| Պարոնշահ, ծերունի կոշկակար. | Ստեփաննոս ժամկոչ |
| Կարապետ բազազ | Ստեփանոս հյուսն |
| Թորոս ջուլհակ | Եղիսաբեթ կին |
| Սարգիս բազազ | Սաթի դերձակ |
| Ուռումպէկ ոսկերիչ | Մկրտիչ ժամկոչ |
| Ուռումպիկ ոսկերիչ | Ավրան կտավագործ |
| Գորգ ներկարար և իր կին Գոհարը | Մկրտիչ դանակագործ |
| Սարդիս դանկրար | Թավտա բազազ |
| Մարգարե ջուլհակ և իր եղբայրը | Հեթում դարբին |
| Ավետիք ջուլհակ | Աղբարշահ գինեծախ |
| Ամպետ կտավագործ | Գրիգորես եգեպան (այգեպան) |
| Կիրակոս ճոն | Պարոնշահ սանդրգործ |
| Բաբել ոսկերիչ | Հովհաննես կտավագործ |
| Մարգարե քթանգործ | Տուրքի եգեպան |
| Ուստիանէ, կին ոմն | Կարապետ երկայն, ջուլհակ |
| Վարդերես ջուլհակ | Սոփիա կին. որը ծածկոց է նվիրում գրքի համար. |

Գրչից բացի, մատյանի ստեղծման գործի վրա աշխատում է նաև նրա կրտսեր որդի Գրիգորը, որը թուղթն է կոկում[2]։

Մեր սքանչելի ձեռագիր մատյաններն ստեղծելու այս հավաքական ջանքի օրինակները մենք բերեցինք ցույց տալու համար, որ մեր ժողովուրդը ամենալայն գործունեություն է ցուցաբերել անցյալի կուլտուրայի բոլոր տեսակի հուշարձանների կերտման և ստեղծման բնագավառում, մյուս կողմից՝ նշելու, որ եթե մեր քարաշեն կոթողների վրա այդ կարգի մանրամասն տեղեկությունները բացակայում են, ապա դա բարեն նյութի վրա գրելու դժվարության ու տեղի սղության հետևանք է միայն։

---

[1] Լ. Ս. Խաչիկյան. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. էջ 245—246. Երևան, 1950։

[2] Նույն տեղում, 359—367։